



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«14» *տպեմպեմ* 2023թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 571-Ձ

«ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Ը ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1006-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 24-ի N 24-Ա հրամանը և «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի նոյեմբերի 6-ի հայտը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով՝ 2023 թվականի

նոյեմբերի 16-ից մինչև 2024 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 5 (հինգ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 24-ի N 24-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ից մինչև 2024 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 5 (հինգ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի հունվարի 24-ի N 24-Ա հրամանի 1-ին կետով նախատեսված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ


Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 018/2023  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՂԱՆԱԿ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ  
ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՕՂԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 018/2023  
TO THE AIRCRAFT OPERATOR OF REPUBLIC OF ARMENIA FOR TWO AND MORE  
CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE  
REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Ֆլայոն Արմենիա» ՍՊԸ "Flyone Armenia" LLC
Պատվիրատուն Charterer	«Ֆլայոն Արմենիա» ՍՊԸ "Flyone Armenia" LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A319, A320
Հաճախականությունը Frequency	շաբաթական 5 չվերթ 5 flights per week
Երթուղին Air route	Երևան/UDYZ/ - Ստամբուլ/LTFM/ - Երևան/UDYZ/ Yerevan/UDYZ/ - Istanbul/LTFM/ - Yerevan/UDYZ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	16/11/2023 մինչև 28/03/2024 16/11/2023 till 28/03/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ  
ՄԻՆԻՍՏՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
CHAIR OF THE  
CIVIL AVIATION COMMITTEE  
MIHRAN KHACHATRYAN

Восстановимая подпись

X 

ՄԻՆԻՍՏՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266

14.11.2023

(տալու  
ամսաթիվը)  
(date of issue)